30. ԽԱՍԻՆՃԱ ԲԱՍՄԱՉԻ

Գյանճաու հ՝էրկրին մեջ թագավորըմ կէղնի, ուր անուն լե՝ Վաչէ։

Վաչէին տղե մը կեր, անուն Վաչական էր։

Էդ Վաչականին լե խըզմաթքյարըմ կեր, անուն Էրվանդ էր։

Վաչականն էր հ՝ըմնօր կէլներ, կառներ զուր խըզմաթքյար ուր հետ, կէրթեր ավճուրթենի։

Օր մը լե գացեր են ավճուրթենի էդոնք, դառցան էկան գեղի մը կշտով կընցնեն։ Տեսան օր քոմըմ կնիկ ու հարս, ախչիկ կեն կանուկ էդտեխ։

Վաչականն ասեց ուր խըզմաթքյարին, թե.— Էդա քոմ հարսներ, ախչկներ հ՝որի՞ կաներ ին էդտեխ։

Խըզմաթքյարըն ասեց.— Էնտեխ հ՝աղբուր է, էկեր ին ջուր կտանին։

Վաչականն ասեց.— Օր հըմալ է, ես լե ծառավ իմ, էրթանք էնտեխ, ջուրըմ խմինք ու հ՝ընցնինք էրթանք։

Էկան հ՝աղբրի մոտ, վերցին ասին.— Հարսներ, ջուրըմ լցեք՝ տվեք խմենք, հ՝ընցնենք էրթանք մըր ճամբու հետ։

Կնիկըմ վերուց ըղթաս, զարկեց հ՝աղբրի դեմ, լըցեց ջուր, օր իտեր Վաչականին, ախչիկըմ հասավ առավ էդ կնկա ձեռքեն զջուր թափեց, չթողեց օր իտեր։

Վաչականն զարմացավ, չըկըռցավ էդ բանի մանեն հաներ, ինչքան օր մէղեց, ախչկան ի՞նչ կառներ ասեր, ախչիկ էր։

Վաչականն ուր մըթալի մեջն էր դրռ, տեսավ օր էդ ախչիկ լըցեց ղթաս ջուր, բերեց տվեց ուրին։ Վաչականն առավ ու խմեց։ Հ՝եբոր խմեց խըլըսավ, հարցուց ախչկա մոտեն, ասեց.

— Էն կնիկ օր հ՝առջի հեղ լըցեց ջուր, կիտեր ընձիկ, հ՝որի՞ չթողեցիր։

Ախչիկն ասեց.— Դու ճամբուց օր էկար, քըրտնուկ էր, քու տամբրներու բերան բաց էր, թե օր հէն գահ ջուր խմեր, կէրթեր քու տամբրներու մեջ, կհիվընդներ, ցավացի զքզիկ, չթողի օր խմեր։ Ասի՝ քիչըմ թըղ ըռհաթի, սորա խմե։

Վաչական տեսավ օր էդ ախչկա ասած շիտակ է, մուշթըրի աչքովըմ իշքեց ախչկան, տեսավ օր օղորդ, ախչկա վըրա-գլուխ կըտրուտուկ է, ըլլե ինք շատ խորոտիկ էր։ Սիրտ թալեց էդ ախչիկ, ասեց ուր սրտի մեջ՝ «Ես զէդա ախչիկ պիտի առնիմ»։

Թողեցին էնտեխեն էկան։

Էրվանդն ու Վաչականն օր հ՝առջին հեղ ճամբու հետ իգեն, կզրուցեն հ՝իրարու հետ, հար հասնեն տուն։ Էդ հաղ օր ընկան ճամբախ, իսկի չխոսաց Էրվանդի հետ, զբերան խփուցեր էր ու զուր ձին կքշեր։

Էրվանդ զէդ օր տեսավ, ասեց.— Վաչական, ուրիշ հեղ օր ճամբու հետ կէրթենք, դու մեկ կասեր, հազար կըշրխկեր, հ՝էսօր հ՝որի՞ չըս խոսա իսկի, քզիկ ի՞նչ ձեռք տվեց։

Իրեկ հեղ Էրվանդ հարցուց, Վաչականի բերան չբացվավ, պատասխան չտվեց։

Վեր հասըլ զէրես շատ տարավ, լալուճկավ. Վաչականն ասեց.— Էրվանդ, քինե պահիմ, աստրծուց ի՞նչ պահիմ, իմ սիրտ հ՝ընկավ էդ ախչիկ։ Աշխըրկի մեջ օր կարգվելու էղնիմ, էդ ախչկաց զատ ուրիշ ախչիկ չպիտի առնիմ։

Էրվանդ ասեց.— Վաչական ախբեր, դու հ՝որի՞ էդ հըմալ անհամանհամ կխոսաս։ Էդ ախչիկ գեղացու մը կտոր, դու թագավորի մը տղա, թագավոր իմա՞լ հ՝իգա կանի էդոր դուռ, հ՝ուզե քզիկ ախչիկ։

Ինչքան օր խըզմաթքյար համոզեց, թե.— Վաչական, էդի լայեղ չէ քզիկ, գնա զանկին մարդու մը դուռ կանի, էնդոր դուռ ախչիկ հ՝ուզե։

Վաչական ասեց.— Էրվանդ, գլխուցավանք հ՝որի՞ կէնիս, ես հեզրմ ասեր իմ, զէդ ախչիկ կառնեմ, կուզե շան ախչիկ թըղ էղնի, կուզե շնակնի։ Թագավոր օր չուզե, զիս թըղ թալե ուր տնեն դուրս, դատաստահրում թըղ հանե ուր մալեն, մըլքեն։

Էդ հըմալ հ՝իրարու հետ զիրար կտաշեն։ Էկան, էկան հասան տուն։

Իրեկ չորս օր էդ տզենն է նը հաց կուտեր, նը ջուր կխմեր, օր բզօր կհալեր ու կմաշեր, քանի էրթեր հետ կէրթեր։

Մեր տեսավ օր ուր տղեն օր բզօր հետ կէրթա, նը հաց կուտե, նը հ՝ավալքու պես կասե, կլսե։

Հարցուց ասեց.— Լաո, քզիկ ի՞նչ է էղի օր չըս խոսա։

Ինչկան հարցուց, բան չասեց մոր։ Ջանդարդի էղավ մեր, հ'ելավ ուր էրկան ասեց, թե.— Քու տղեն նր կուտե, նը կխմե, օր բզօր քանի էրթա, հետ կէրթա։

Թագավոր կկանչե տանե զտղեն, կասե.— Լաո, քզիկ ի՞նչ է էղի, օր դու օր բզօր հետ կէրթաս, հաց չըս ուտի, հ'ավալքու պես չասիս, չըսիս։

Ինչկան ասեց, խոսաց, չկառցավ տղի բերնեն խոսքըմ փրցուցներ։

Հ'ընցավ ժում ու ժամանակըմ։

Իրիկ ու կնիկ մեկտեխ ասին.— Ջանըմ, էդ տղին ցավըմ կա, հըմկա էրվանդ գինա, ի՞նչ է էդոր ցավ։ Մենք բիչա սապապ ինք բըռնի զտղի փողպատ, կանչինք զէրվանդ հարցունք։

Կկանչին զէրվանդ, կհարցուն, թե.— էրվանդ, էդ տղին ի՞նչ է էղի, օր քանի էրթա, հետ կէրթա։

էրվանդ կասե.— Թագավոր ապրած, վիրնե պահել էղնի, քինե պահել չէղնի։ Օրըմ գացեր ենք ավճութենի, դառցանք էկանք, հ'աղբրի մը վրեն քոմըմ հարս ու ախչիկ կեր կանուկ, հ'ուզեց, ջուրըմ խմեց։ Ախչիկըմ տեսավ, սիրտ հ'ընկավ էդ ախչիկ։ Ասեց՝ «Իմ, էղնի էղա է, չէղնի, էդա է»։ Ինչկան համոզեցի, խրատեցի զինկ, թե՝ Վաչական, էդի քու հունգուֆին չէ, անկաճ չէրեց։

Կանչին զտղեն լե բերին։ Ասեց.—Տղա լաո, ես լսիր եմ, օր դու գեղացի ախչկա մը վրեն ծրռիր իս, էդոր հ'ապով ինչկան էրթաս, հետ կէրթաս։ Էկո էդ սավտից վազ հ'ընցի, զքու ձեռք դիր թագավորի մը ախչկա վրա, յախուտ երևելի մարդու մը ախչկան, էրթամ հ'ուզիմ բերիմ։ Ամոթ չէ՞ մզիկ, էրթանք կանինք գեզացու գուռ։ Մենք թագավոր ինք, մըր անվան չը վելե։

Շաբաթըմ, էրկուք վիսա կկանչեն զտղեն, կհամոզեն, անկարելի էր։

Տղեն կասեր.— Ես էդ ախչկաց ձեռք չըմ քաշի, իմ՝ էղնի էդա է, չէղնի, էդա է։

Թագավորի ճար կկտրի, կտեսնա օր տղի սիրտ ախչկաց չդառնա, կէլնի քանի մը մարդ կճամբե էդ գեղ, կասե՝ գացեք հ'ուզընկան էդ ախչըկան։

Հ'ուզընկներն է, կիգան, կհարցուն զգեղ, կփնտռին գտնան զախչկա. հոր տուն։

Կիգան կմտնին տուն, ի՞նչ տեսնան, մրոտ քողտիկըմ ու մարդըմ լե նստուկ է, ջուլկութեն կէնե։ Մակա մ' ասի, էդ լե ախչկա պապն է։

Ջուլհակն կասե.— Ախբըրտանք, հ'որի՞ կանաք։

Կբերե ամեկու տակ ցան կոշտըմ, զըմբիլըմ կդնե, կնստին։

Հ'եր կնստին կխըլըսին, կվերցու ջուլհակ կասե.— Ախբըրտանք, բարով իք էկի։

Ու կդառնա զուր մըկուկ կթալե, զիրա գործ կէնե։

Մարդիկ էրկու սահաթ կնստին, կտեսնան օր ջուլհակ զուր գլուխ նը վի կվերցու, նը կխոսա։ Ծար ուրանց կկտրի, ուրանք կվերուն կասին.

— Ախբեր, էրկու սահաթ է, մենք նստուկ ենք էդա տեխ, չրս հարցու՝ դուք հ՝որի՞ն իք էկի։

Ջուլհակ կվերու կասե.— Ախբեր, էկեր իք, բարի եք էկի։ Էկեր իք ես ասիմ՝ հ՝ելեք գացե՞ք, բան մ՝ ունիք, ասեք։

Էդոնք կասին.— Մենք էկեր ինք, զքու ախչիկ կուզինք թագավորի տղին, ի՞նչ կասիս։

Ջուլհակն կասե.— Էկեր իք, բարով եք էկի, ես բան չրմ ասի։ Բըլե կարգվող ախչիկն է, ախչկաց հարցուցեք. էնի օր առնե, ես ի՞նչ կասիմ։

Էդոնք կվերուն կասին.— Ախչիկն հ՝ու՞ր է։

Կասե.— Հանդե քոխ գործ կէնե։

Հ՝ուզընկներն կասին.— Օր հըմալ է, դու մարդըմ ճամբըցու ախչկա մոտ, տես ի՞նչ կասե։

Կէլնին մեկըմ կճամբին, կիգա ախչկա մոտ, թե.— Թագավորի տղեն ծոիր է քու վրեն, ճամբեր է՝ էկի քզիկ հ՝ուզնկան, ի՞նչ կասիս։

Ախչիկ կասե.— Էկած ին, բարով խերով ին էկած, խոմ ես թագավորի տղին անունըմ չրմ դնի։ Մինակ բանըմ հարցում, թըղ ուրանց խատրը չմնա։ Կյալո, թագավորի տղեն սանյաթ դինա՞։

Թագավորի մարդիկ կվերուն կասեն.— Ջանըմ, էդի թագավոր է, աշխըրկի մալ ու տոլվաթ ուրն է։ Թագավորի տղեն սանյաթ ի՞նչ կէնե։

Ախչիկն կասե.— Ես գինամ թագավոր զանկին է, մալ ու տոլվաթ շատ կա, աշխըրկի մալ ուրն է։ Մինակ կհարցում՝ տղին սանյաթ կա՞, թը չկա։

Կվերցուն կասին էդ մարդիկ.—Թագավորի տղին սանյաթ չկա։

Ախչիկն կասե.— Օր սանյաթ չկա, չրմ առնի։

Էդ մարդիկ կասեն.— Ջանըմ, էկո, անխելքութեն մ՝էնի, թագավորըմ է, ճամբիր է քզիկ հ՝ուզընկան, խոսկ տուր, դառնանք էրթանք։

Ախչիկ նա էրիր է, նո փեխամբար չէնե.—Չրմ առնի, քի չրմ առնի, օր սանյաթ չգինա։

Մարդիկ կէլնին փու փոշման կթողին, կիգան։

Կիգան թագավորին ճուհաբ կիտան, թե.— Հ՝ելանք գացինք, ախչիկ կասե՝ թագավորի տղին սանյաթ չկա, չրմ առնի։

Թագավոր կասե.— Ջանըմ, չհարցուցի՞ք էդ ախչկաց, ի՞նչ սանյաթ կուզե, օր տղեն սորվի։

Մարդիկ ասին.— Թագավոր ապրած, վահլլալի, մենք զէդ տեխ չֆքրանք։

Կասե թագավոր.— Օր հըմալ է, հ՝ելեք մեկըմ ճամբեք, թըղ էրթա էդ ախչկա խեչ, տեսնանք ինչ սանյաթ կուզե, օր տղեն սորվի։

17—915

Կէլնին մարդ կճամբին, կիգա ախչկա մոտ։ Կասին.— Դու ի՞նչ սանյաթ կուզիս օր սորվի տղեն, առնե զքզի։

Ախչիկն կասե.— Ես սանյաթի աղեկն ու վատ չէ օր կփընտռիմ։ Սանյաթըմ թըղ սորվի, ինչ կէղնի, թըղ էղնի։

Թագավոր կասե.—Օր հըմալ է, ուրանք ջուլհակ ին, ջուլկութեն կէնին, կտավ շիլա կգործեն, դուք լե ղտղեն ջուլկութենի տվեք։ Թըղ էրթա ուրեն սանյաթըմ սովրի։

Տղեն կդնեն ջուլկութենի, աղեկըմ կսովրի։

Կէլնին, նորեն մարդ կճամբեն ախչկան հ՝ուզընկան։

Ախչիկ կասե.— Տղեն սանյաթ սորվե՞ր է։

Կասին.— Հա։

— Ի՞նչ սանյաթ սորվե՞ր է։

Կասին.— Քու պես ջուլկութեն։

Ախչիկն կասե.— Օր ջուլկութեն սորվեր է, ուր ձեռքի գործ բերեք, տեսնամ։

Կէրթան կբերին կտորըմ շալ, կասին.— Էդա տղեն է գործի։

Ախչիկն կասե.— Տեսա՞ր, աղեկ է, սանյաթըմ թըղ սորվի, ինչ կէղնի, թըղ էղնի։

Կասին էդ մարդիկ.— Օր հըմալ է, զքու թագարուկ տես, էրթանք։

Ախչիկն կասե.— Ընծիկ ի՞նչ թագարուկ կա, ես ու ես իմ, օր կանուկ իմ հ՝ոդա։

Կբերին ձեռքըմ հալավ կհագուն, կառնին կէրթան։

Կառնին կիգան։ Յոթն օր, յոթ գիշեր էդոր հարսնեկ կէնին, գոլ ու ղուռնեն կզարկե, կխաղան։

Էնդոնք թըղ ուրանց քեֆի հետ էդնին, մենք դառնանք վըր թագավորին։

Էրկու-իրեկ տարի անցավ։ Թագավոր մեռավ, տղեն նստավ վըր ուր հոր թախտին թագավոր։

Էն մեկ օր Վաչականն ու ուր կնիկ նստուկ են վըր հացին։

Կնիկն վերուց էրկան ասեց.— Մարդ, էդա էրկու-իրեկ տարի կէնե, օր դու նըստիր իս վըր քու հոր թախտին։ Օրըմ հ՝որի՞ չըս էլնի օլըրտի քու էրկրներ, տեսնաս իմա՞լ է, իմալ չէ քու ժողովուրդ, որ զվիր վրեն զոր կէնե։

Վաչականն կասե.—Կնիկ, զքզիկ խաբեմ, աստված իմա՞լ խաբեմ, իմ մտկեն հըմլա բանըմ չընցներ։

Էդ լե իմալ կէղնի, օր թագավորի կնիկ կասե ուր էրկան, հոկուց հ՝առեջ կէլնին, զէրվանդ գործով մը կդնին ճամբին քաղաքըմ։ Հա հ՝էսօր հ՝իգա, հա վաղ հ՝իգա ու չիգա։

Հ՝ելավ թագավոր մարդ ճամբեց էդ քաղքներ, ճարճի կանչել տվեց, հար ինչ օր էրեց, ղէրվանդ չգտավ։ Կորավ գնաց ու գնաց։

Օր էրվանդ կորավ գնաց ու կնիկ լե զեդ ասեց, թագավորի վրեն էղավ բեռ։ Օրըմ նորեն հ՝իրկուն մը նստուկ են իրիկ ու կնիկ մեկտեղ, հաց կուտեն։

Կնիկն ասաց էրկան.— Դու պետկ է հ՝ելնիս հագնիս ըռընճբրի հալավ, էրթաս քու հ՝երկըրներ օլըրտիս, հասկնաս քու ժողովրդի հալ ու հալպաթն։ Ո՞րն է նեղության մեջ ու ո՞րն է լիութենի մեջ, ո՞րն է զորութեն կէնե ու ո՞րն է ֆուխարա։ Բալքիմ էրթաս էն քաղաք, օր էրվանդ գացեր է, օլըրտիս, գտնաս զէրվանդ, առնիս հետդ հ՝իգաս։

Հ՝ելավ թագավոր, զուր խալըղ փոխեց, ուր հետ մեկ էրկու մարդ լե առավ, հ՝ընկավ հ՝երկըրներն օլըրտավ։

Թագավորի կնիկ լե հագավ ղիրկա շորեր, զծամեր դրեց գլխու տակ ու նստավ վըր թախտին, էրեց զուր թագավորութեն, հար իրիկն հ՝իգեր։ Մարդ իսկի չգիտցավ, թե թագավոր ուրիշ տեխ գացեր է։

Թագավորն է, օլըրտավ քաղքե-քաղաք, գեղե-գեղ, գնաց հասավ էրվանդի էրթացած քաղաք։ Օր մը էդ քաղքի մեջ կօլըրտեր, տեսավ տեխըմ քոմըմ ըռընճբար կեն կանուկ։ Գնաց էդոնց խեչ կանավ։ Հարցուց ասեց.—Աճայիբ ձըր դին ըռընճբրներն իմա՞լ ին, աղեկ իտարա կէնին, մըր դիի ըռընճբրներու հալ շատ աղեկ է։

Էդ խոսքի մեջն էր, մեկըմ լե տեսավ վերին դին խալաբալըխի մը ձեն կիգա։ Հալահուլեսնելու ձեն կէլնի հ՝երկինկ, խառվեր ին հ՝իրար ու կեխտին զիրար, կիգան։

Ասեց.— Էդա ի՞նչ խալաբալըխ է։

Ըռընճբրներն ասին.—Էդի էդա քաղքի մեծ շեխն է, կիդա, մարդիկ լե հ՝ընկեր ին հ՝ետևեն, կիգան։

Էկան մոտեցան, տեսան օր մեկըմ լե էդոր հ՝առջև կավլե, մեկ-մեկ քըրամիթ կդնե օտկերու տակ, կկոխե ու կիգա։

Ասեց.— Էդա ի՞նչ է։

Ասին.— Էդի կավլե շեխի օտկերու հ՝առջև ու մեկ-մեկ քըրամիթ կդնե, օր չէղնի մըռջիմ մնա ուր օտկերու տակ, կոխե վրեն, մեղք է։

Էկան, էկան մոտեցան էդ քոմ ըռընճբրին, օր թագավոր կանուկ էր մեջ ուրանց։

Հարցուց շեխ էդոնցնե, ասեց.—Դուք ի՞նչ մարդ իք։

Ասին.— Ըռընճբար ինք։

Ասեց.— Դուք հախով կբանե՞ք։

Ասին.— Հա՜, հ՝որի չընք բանի։

Ասեց.—Օր հըմալ է, էկեք իմ հետ էրթանք։

Հ՚ընկան հ՚ետևեն գացին։ Գացին քաղքեն դուրս հ՚ելան, տեսան օր էդ տեխ վանքըմ կեր ջինուկ, առավ գնաց էդ վանք։ Տարավ մտուց զէ-դոնք բակի մեջ։ Բակի մեջ էրկրթե դուռըմ կեր։ Խըզմաթքյարին ասեց.— Բաց զէդա դուռ, տար զէդա մարդիկ ներս, ցուցու ուրանց, թըղ աշ-խատեն։

Խըզմաթքյարըն բացեց զդուռ, էդ ըռընճբրներ լցվան ներս։

Օր էդոնք լըցվան ներս, զդուռ աղեկըմ դրեց, փակեց ու դառցավ գնաց։

Ըռընճբրներ մանցին նեղ փողնի մը մեջ։

Թագավորն վերուց ասեց ուր ընկերներուն.— Ախբըրտանք, էդ-ս տեխ օր հ՚ընկանք, գեջ տեխըմ է, ես կվախենամ էդա տեխեն։

Խելըմ մանցին էդտեխ կանուկ, մարդ մուրդ ուրանց հ՚երեան չէկավ։

Սորա թագավոր տեսավ, օր էդտեխ հ՚երկեն փողան մը կեր, ասեց ուր հ՚ընկերներուն.

— Ախբըրտանք, դուք մանցեք էդա տեխ, ես էրթամ, տեսնամ էդա փողնի գլուխ ի՞նչ կա ու դառնամ հ՚իգամ։

Թագավոր բըռնեց զէդ փողան ու էկավ քիչըմ տեխ։ Տեսավ օր էդ-տեխ դուռըմ կեր։ Բացեց զէդ դուռ, օր ի՞նչ տեսնա աղեկ է։ Տեսավ էդ-տեխ լիկ մարդու օսկոր է։ Դրեց զէն դուռ, մեկ լե քիչըմ էնդին հ՚ընցավ, տեսավ դուռըմ լե հ՚ոդի կա։ Բացեց զէդ դուռ, ի՞նչ տեսնա, աղեկ է։ Տե-սավ օր պղընձներ դրուկ է վըր օճըխներուն ու մարդու ջանտակ լըցուկ է մեջ, կէփի։ Զէն գուռ լե դրեց։ Քիչըմ լե գնաց էնդին, գողու ճրագի մը լուս տեսավ։ Բացեց զդուռ, տեսավ օր քոմըմ մարդիկ, մարդու ըռանկ լե չմանցեր է ուրանց հ՚էրես, նստուկ ին ու զուրանց սանյաթ կբանին։ Որ թարզութեն կէնե, որ նաճրութեն, որ լե՝ ջուլկութեն։

Կանուկ էր, թամաշա կէներ զէդոնք։ Տեսավ օր էդոնցնե մեկը հ՚ե-լավ ու էկավ, փաթվավ ուր վըզնըվի։

Փաթվավ վըզնըվի ու ասեց.— Յամա՜ն, իմ թագավոր, դու էդա տեխ իմալ ի՞ս հ՚ընկի։

Թագավորն ասեց.— Ջանըմ, դու ո՞րն իս օր զիս կճանչընաս։

— Ջանըմ, դու զիս չճանչնա՞ս,— ասեց էդ մարդ,— ես քու խըզ-մաթքյար Էրվանդն իմ։

— Էրվանդ, աստված զքու տուն ավիրե, դու զէն մասի, իմա՞լ իս էկի հ՚ընկի էդա տեխ։

— Իմա՞լ էղավ, թագավոր ապրած, ասեց Էրվանդ,— դու օր զիս Համբեցիր, էկա էդա տեխ, էկա զքու գործեր տեսա, առի զբաներ հա-զըրեցի, օր ճամբենք հ՚իգենք, լսեցի օր էդա տեխ օսկերչութեն փարա կէնե։ Դու գինաս օր, իմ ձեռքեն լե աղեկ օսկերչութեն կիգեր։ Ասի՝ տա-նիմ զէդա բաներ թասլիմ էնիմ իմ թագավորին, դառնամ հ՚իգամ էդա

տեխ, էնիմ օսկերչութեն։ Ես էդ մտկի մեջ կանուկ ենք շուկի մեջ, տեսա շեխըմ էկավ հ՝ընցավ իմ հ՝առջեեն։ Հարցուց ասեց՝ դու ի՞նչ մարդ իս, ասի՝ ես օսկերիչ իմ, ասեց՝ աղեկ օսկերչութեն կէլնի քու ձեռքեն, ասի՝ հա։ Ասեց՝ օր աղեկ օսկերչութեն կէլնի քու ձեռքեն, արի էրթանք, իտամ գործ քզիկ, աշխատի։ Ես լե ասի՝ կէրթամ, զէդոր գործ կտեսնամ, խելքս օր կտրեց՝ կդառնամ կէրթամ զիմ թագավորի բաներ կիտամ հ՝ինկ, կդառնամ կիգամ էդա տեխ, աշխատիմ։ Հ՝ընկա հ՝ետևեն էկա։ Բերին զիս մտուցին էդա տեխ, զդուռ փակեցին վրես ու գացին։ Քիչըմ մանցի, մեկ լե դառցան էկան։ Քիչ բան տվին ընծիկ, շինեցի ու մանցի բրռնուկ էդա տեխ։

Վաշականն ասեց.— Էրվանդ, ախբր դու էդա տեխ մանցիր իս, էդ տեխու ադաթն գինաս, ընծիկ ասե, տեսնամ իմա՞լ է։

Էրվանդն ասեց.— Թագավոր ապրած, էդա տեխու ատաթն իմա՞լ է։ Էդա տեխու ատաթ հըմալ է, օր էդ շեխ կէլնի կէրթա օլբրտի, կժողվե զմարդիկ, կառնե ուր հետ, կիգա։ Էն օր սանյաթ դինա, կբերե էդա տեխ, կբանցու, ինչ օր կառցավ շինեց, կտանին կծախեն, կբերեն ուրանց ուտին ու խմին, էն օր սանյաթ չդիուցավ, կէփին, բերին էդա տեխու մարդոց կկերցուն։

— Օր էն հըմալ է,— ասեց,— դու գնա, քու տեխ նստի, ձեն ու ձու չհանե՞ս, չասիս՝ թագավոր էկեր է էդա տեխ, ես կդառնամ, կէրթամ։

Դառցավ էկավ ուր հ՝ընկերներու խեչ, ասեց.— Ախբրրտանք, հ՝ընկեր ինք մըր գերեզմնի մեջ, ատտված զմզիկ ազատե էդա տեխեն, տեսնանք իմա՞լ կէղնի։

Դառցավ ասեց ուր հ՝ընկերներուն.—Հըմկա մըր մեջ մարդ կիգա, կհարցու ձենե՝ սանյաթ դինա՞ք, ջուհաբ չիտաք, ես կիգամ հ՝առեջ, կասիմ՝ դինաք, սորա ձենե լե կհարցու՝ դինա՞ք, հ՝ըմենկդ մեկ բերան կասեք՝ գինանք, մըր սանյաթ հ՝ըմնուս մեկ չեշիտ է։

Էփեի էդ տեխ պաքլանմիշ էրին, մեկ լե տեսան դուռըմ բացվավ, մարդըմ մտավ ներս։ Հարցուց ասեց.

— Ախբրրտանք, ձըր մեջ սանյաթ գիցող կա՞, չկա։

Թագավորն զինկ թալեց հ՝առեջ, ասեց.— Հա, մենք հ՝ըմենք լե սանյաթքար ինք, հ՝ըմնուս ձեռքեն աղեկ գործ կիգա։

Ասեց.— Աղեկ, ձըր սանյաթն ի՞նչ է։

Ասեց.— Մըր սանյաթ ջուլկութեն է, աղեկ շալ գինանք դործինք, հըմալ օր մեկ շալ կէնե հարիր օսկի։

Շեխի խըզմաթքյարն օր հասկցավ, թե մեկ շալ կէնե հարիր օսկի, ասեց. «Ես զէգի մարդու չպիտի ասեմ, պիտի վերցում ընծիկ, իտամ աղեկ շալ գործել, տանեմ ծախեմ, առնիմ հարիր օսկի»։

Ասեց խըզմաթքյարն թագավորին.— Ձզիկ ի՞նչ պետկ է, օր ըղձըր սանյաթն բանեք։

Թագավորն ասեց.— Մզիկ պետկ է աղեկ լուս տեխըմ ու դազկյահըմ, օր բանինք։

Տարավ էրեց լուս տեխըմ, զգազկեհն դրստեց ու թողեց գնաց, ասեց՝ գացեք գործեք։

Թագավորն ասեց էդ խուլմուն.— Գինաս, մըր սանյաթ շատ նազուկ սանյաթ է, մենք միս չընք կըռնա ուտի, եղ ու մեղր պետկ է ուտինք, օր լուս մնա մեր աչկեր, աշխատինք, թը չէ՝ չընկ կըռնա աշխատի։ Էդ մարդ զէդ լե խաբուլ էրեց, ասեց, «Հարիր օսկի մեկ շալ կծախիմ, ի՞նչ կա»։

Հ՝ելավ գնաց, ինչ օր հ՝ուզին առավ էկավ, ասեց.—Գացեք դը գործեք։

Գործեց, շալըմ կտրեց տաուն օրվա մեջ։ Բերեց էդ շալի մեշ գրեց, թե. «Մենք հ՝ընկեր ինք Ֆըլան քաղաք, քաղքից դուրս վանքի մը մեշ, կըռապաշտի տեխ է, շուտով հասնիս մզիկ, օր չհասնիս՝ կմեռնինք»։

Շալի տակ լե զուր իզմեն դրեց՝ Վաչական։

Խըզմաթքյարն էկավ, տեսավ օր զշալ կտրեր ին, վերցուց օր էրթեր, Թագավորն ասեց.— Գինա՞ս, էդ շալի գին հ՝ըմեն մարդ չգինա, խամ մարդ գին չիտա, անճախ թագավոր գինա էդոր գին, տանիս թագավորին, կարելի է հարիր օսկուց հ՝էվելի իտա։

Մարգն է, առավ զշալ, ծալեց դրեց ծոցկ, օր մարդ չտեսնա ու հ՝ընկավ ճամբախ։

Թագավորի քաղաք ո՞ր մեկն է, թագավորի քաղաք ո՞ր մեկն է։ Գտավ ու գնաց զթագավորի դուռ զարկեց։

Տեսավ օր քանի մը մարդ կեն՝ էդ տեխ կանուկ, ասեց.— Թագավոր դո՞ր է, ես կուզեմ էրթամ թագավորի խեչ, ընծիկ խզմաթ կա ուր հետ։

Ասին.— Դու կանի էդա տեխ, մենք էրթանք ասենք թագավորին, տեսնանք ի՞նչ կասե, սորա գնա։

Գացին ասին թագավորին.— Էդա տեխ մեկըմ կա կանուկ, կասե՝ ընծիկ խզմաթ կա թագավորի հետ։

Ասեց.— Գացեք կանչեք, թըղ հ՝իգա։

Էկան կանչին, ասին.— Կասե. «Թըղ հ՝իգա»։

Հ՝ելավ գնաց թագավորի մոտ։

Թագավորն ասեց.— Հ՝որին ի՞ս էկի։

Ասեց.— Շալըմ իմ բերի, անճսխ օր քզիկ լայեղ է։

— Տուր տեսնամ,— ասեց թագավոր։

Առավ իշքեց, տեսավ օր հասարակ շալ մ՝ է։

Ասեց թագավոր էդ շալ ծախողին.— Էդ շալու գին ի՞նչ է։

Շալ ծախողն ասեց.— Հարիր օսկի։

Թագավոր աղեկըմ ֆքրավ էդ շալի վրեն, ուր ձեռքի սանյաթն է, ինք աղեկ դիներ, ասեց. «Ջանըմ, էդա շալ հասարակ բան է, էդի հարիր օսկի հ՝որի՞ կասես»։ Շալեց տվեց ձեռք, ասեց.

— Առ գնա, ընծիկ պետկ չէ։

Շալ ծախողն է, օր առավ ղշալ, կէրթեր, թագավորն հարցուց, ասեց. —Էդա քու շալի մարիֆաթն ի՞նչ է, օր հարիր օսկի կասիս։

Շալ ծախողն ասեց.— Էդ շալի մարիֆաթն էն է, օր էդոր գործողն ընծիկ ասեց. «Որն օր ղէդ շալ կապե ուր վրեն, ինչքան տխուր էղնի, կուրախանա»։

Թագավորն ասեց.— Օր հըմալ է, տուր տեսնամ, աղեկըմ ֆքրիմ, հ՝առջին հեղ չիշքի։

Առավ ղշալ, պարզեց արևու դեմ, աղեկըմ չորս դին իշքեց, տեսավ օր էդ շալի հ՝որթոլախ նըխշըմ կա, իշքեց՝ գիր է։ Կարդաց, տեսավ օր վրեն դրուկ է. «Մենք հընկեր ինք ֆըլան տեխ, օր չհասնիս ընծիկ, մենք կէրթանք կմեռնինք»։ Իշքեց, տակ լե գրուկ է. «Վաչական»։

Զէդ օր տեսավ, կանչեց զուր խըղմաթքյարներ, ասեց.— Բռնեք զէդա մարդ, տարեք թալեք բըռնատուն, աղեկըմ զինկ պահեք, օր չէլնի փախնի, հար ես զիմ գործեր տեսնամ։

Զուրի էդոր մարդ ուր հ՝էրես չէր հ՝ելի, մարդ չըր գինե, թե թագավոր հ՝ոդ է, հ՝ոդ չէ։ Հ՝էնօր զըմեն փաշեք կանչեց, բերեց։

Օր բերեց, վերուց ասեց.— Էդա վեց ամիս է ձըր թագավոր հագիր է ըռընճբրի հալավ, մտիր է դերվիշ խըլըղի, գացիր է ուր հ՝էրկիրներ կօլըրտի։ Թագավորութեն վեց ամիս ես է կէնիմ։ Հըմկա խաբար առիր իմ, օր ֆըլան տեխ հ՝ընկիր է նեղության մեջ, օր չհասնենք, կմեռնի կէրթա։ Ձձզիկ կանչիր իմ բերի, օր տասնուվեց տարեկանեն մինչև եթ-միշ տարեկաններ զուրանց սիհլաներ կապին վըր ուրանց, հ՝ընկնին իմ ետև։

Հ՝ելավ հեծավ ձիին, ձեն ընկավ քաղքի մեջ, թե թագավոր նեղության մեջ է։ Ինչկան իրիկմարդ կեր էդ քաղաք, կապին զուրանց սիհլաներ վըր ուրանց ու հ՝ընկան էդոր հ՝ետևեն։

Հ՝ընկան հ՝ետևեն, շատ գացին, քիչ գացին, գացին մտան էդ քաղաք, հասան վանքի դուռ։

Ինկ կես սահաթ ձիավորներուց հ՝առեջ կէրթեր, հ՝ըմնուց հ՝առաջ ինկ հասավ վանքի դուռ։ Հ՝եր հասավ վանքի դուռ, ձիու օտներու նալերու շըխըռտոցն օր էկավ վըր սալերուն, էդ կռապաշտի տան մեջ ինչքան շեխ ու մրիդ կեր, թափան ելան դուրս։

Մակար մ՝ ասի էդ շեխու թաքիեն կռապաշտի տեխ է էդի։ Շեխն ինկ կռապաշտներու մեծ, շեխի խզմաթճիկ կըռքերու մըրիդներն ին էղի։

Էդոնկ օր հ՝ելան դուրս, տեսան ձիավորըմ մտեր է ուրանց թաքիի բակ, կէրթա, կիգա։

Ասին.— Դու ի՞նչ մարդ էղնիս, օր հ՝իգաս էդա սուրբ տեխ առնիս քու ձիու օտներու տակ։

Էդ տեխեն հուճում էրին վըր թագավորին։

Թագավոր զարկեց, էդոնցնե մեկ սպանեց։

Հ՝եր տեսան օր ուրանց մըրիդներուց մեկ հ՝ընկավ ու մեռավ էդոր ձիաններու օտներու տակ, էկող վըր էկողի էկավ ու էդ ձիավորին զարկեց։ Մեկ լե տեսան, ձիավոր ձիուց էկավ ցած ու իր ծամեր փըռվավ վըր փեճին։

Զէդ օր տեսան, էդ կռապաշտի մարդիկ, ասին։—Ալավոկի կա ու չկա մըր աստվածներուց մեկն է, էկեր է։ Կյասլանմիշ էղան քաշվան հետ։

Ձիավոր զինկ դրստեց, հ՝ելավ վըր ուր ձիուն, նորեն սկսեց կռվիլ, ուր ասքյար հ՝ետևանց էկավ, հասավ։

Ինչ խըտար մարդ կեր հ՝ոդի, զըմեն լե սաղ բըռնեցին, կապեցին հ՝իրար։

Էդ վախտ օր ձիաներու օտներու շըխըռտոց կիգեր, թագավոր էկեր էր կանի դռան հ՝ետև, անկաճ կէներ։ Դառցավ էկավ ուր հ՝ընկերներուն ասեց.

— Տղեկներ, մը վախենաք, մըր հավարն հասավ, ինշալահ, հըմկա զմզիկ կազատին էդա կրակի միշեն։

Հ՝եր զկռապաշտի մեծն ու զուր մարդիկ բըռնեցին, գացին կոտրեցին ըզբըռնատան դուռ։

Տեսան օր թագավոր կանուկ է զրռան հ՝ետև։

Թագավորի կնիկն ասեց.— Զհանեք շուտ զէնդոնք դուրս բերեք. քողքըմ քաշեք վըր ուրանց գլխուն։ Առեք գացեք չատըրներու մեշ, հուշիկ-հուշիկ թող իշքեն լուս, օր ուրանց աչքեր չբռնվի։ Օր մեկեն մեկ մութ տեխեր հ՝ելնեն լուս իշքին, արև աչքեր ուրանց կբռնվի։

Թագավորի խոսքի պես, ինչ խըտար բըռնավոր կեր հ՝ոդի, բերին մեկ-մեկ քողք թալին վըր էդոնց գլխուն, առան գացին չատըրներ։ Ուրանց ասքըրի չատըրներ մոտ էր։

Զբըռնատան դուռ օր կոտրեց, խըլսավ ու զբըռնավորներն հանեց դուրս, հրաման երեց էդ քաղքի մեշ «Ինչ խըտար մեծ մարդ ու փաշա կա, հ՝իգա էդ վանքի մեշ»։

Հոտ ու հաշամ թափան էկան։ Օր էկան, էդոնց հ՝առջև բացեց զդրռ-

ներ, ղբռնավորներ հանեց։ Բռնավորներ օր հանեց, ըստ հաղ ինչխըտար մեծ մարդ կեր, առավ ուր հետ, գնաց օլըրտավ էդ բըռնատան մեջ։

Տեսան օր, տեխըմ մարդու օսկոր է լըցուկ, տեխըմ պղինձ վըր կրակին, մարդու ջանդակ կա մեջ, ուրիշ տեխըմ մարդիկ նստուկ ին, կաշխատին, էղեր ին մեռելի օրինակ։

Կանչեց զէդ մեռելի օրինակ մարդիկ, ասեցին թե.— Էդի իմա՞լ տեխ մ՝ըներ, դու ի՞նչ կէնեք հ՝ոդի։

Ասին.—Ի՞նչ կէնենք, մըր սանյաթ կբանենք, ինչ օր կշինենք, կտանեն ծախեն, բերեն ուտեն։ Էնա տեխ լե, օր պղինձ դրուկ է, ջանդակ կա մեջ, ղէն լե կէփեն, մզիկ կկերցնեն։ Կբերեն մարդիկ, կըլնեն հ՝ոդի, էն օր սանյաթ դիներ, կբերեն կաշխատեցնեն, էն օր չըր գիներ՝ կմորթեն, կերցնեն մզիկ։ Սորա ժողովուրդ կխաբեն, թե մըր աստվածներ հաց կիտան մըզիկ, կուտինք։

Հեր զէդ հ՝ըմեն ժողովուրդին ցուցուց, բերեց ինչքան կռապաշտի մարդ կեր, կախեց ու ղվանքն քանդեց, էրեց խառբանդա։ Կըռքեր լե չարդեց, ղօսկիքն ու զարծաթ ժողվեց, առավ էկավ։

Դառցավ ժողովրդյան ասեց.— Տեսեք էդոնք աստված չին, ուրանց ձեռքով ին շինի, խաբի զձըզիկ։ Թե օր աստված էղնեն, հըմկա զմզիկ քրքրցուցած են։

Վերուց զթադավորն, զէրվանդն ու զասքյար, դառցավ էկավ ուր քաղաք։

Նոր Վաչական նստավ վըր ուր թախթին, էրեց զուր թագավորութեն։

Աստծուց հ՝իշավ իրեկ խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։